

## **ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

**ԵՐՐՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ՝**

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ**

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝  
անդամ պետություններ,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի  
29-ի պայմանագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետի և 7-րդ հոդվածի դրույթների վրա,

հաստատելով երրորդ պետությունների, միջազգային կազմակերպությունների  
կամ միջազգային ինտեգրացիոն միավորումների հետ փոխշահավետ և  
իրավահավասար տնտեսական համագործակցության հետագա ամրապնդման  
ձգտումը,

հաստատելով հավատարմությունը միջազգային իրավունքի հանրաճանաչ  
սկզբունքներին և նորմերին,

համաձայնեցին հետևյալի մասին.

### **Բաժին I**

#### **Ընդհանուր դրույթներ**

##### **Հոդված 1**

Սույն Համաձայնագիրը սահմանում է երրորդ պետությունների, միջազգային  
կազմակերպությունների կամ միջազգային ինտեգրացիոն միավորումների (այսուհետ՝  
երրորդ կողմ) հետ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն)  
միջազգային պայմանագրերի կնքման, դադարեցման և գործողության կասեցման  
կարգը, որոնց կարգավորման առարկայի նկատմամբ Միությունը, «Եվրասիական  
տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին և

Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխան, օժտված է անհրաժեշտ իրավասությամբ (այսուհետ՝ միջազգային պայմանագրեր):

Միության կողմից միջազգային պայմանագրերի կնքման ժամանակ անդամ պետությունների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) փոխգործակցության կարգը (այսուհետ՝ փոխգործակցության կարգ) սահմանվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից:

## **Բաժին II**

### **Միջազգային պայմանագիր կնքելու առաջարկությունը**

#### **Հոդված 2**

1. Միջազգային պայմանագիր կնքելու առաջարկությունը ներկայացվում է անդամ պետության, Հանձնաժողովի խորհրդի անդամի կամ երրորդ կողմի կողմից:

Հանձնաժողովի կոլեգիան կարող է սահմանված կարգով դիմել Հանձնաժողովի խորհրդի անդամներին՝ միջազգային պայմանագրի կնքման հարց նախաձեռնելու խնդրանքով:

2. Միջազգային պայմանագրի կնքման առաջարկությունը գրավոր ուղարկվում է Հանձնաժողով:

3. Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը փոխգործակցության կարգով սահմանված ժամկետում անդամ պետությունների կառավարություններին տեղեկացնում է այդպիսի առաջարկություն ստանալու մասին:

4. Անդամ պետություններն ուսումնասիրում են միջազգային պայմանագիր կնքելու առաջարկությունը, ըստ անհրաժեշտության՝ անցկացնում են խորհրդակցություններ և փոխգործակցության կարգով սահմանված ժամկետում իրենց դիրքորոշումների մասին գրավոր տեղեկացնում են Հանձնաժողովին:

Հանձնաժողովն անդամ պետությունների դիրքորոշումների մասին ամփոփ տեղեկատվությունը փոխգործակցության կարգով սահմանված ժամկետում ուղարկում է անդամ պետություններին:

### Հոդված 3

1. Միջազգային պայմանագիր կնքելու առաջարկության հետագա քննարկման նպատակահարմարությանը բոլոր անդամ պետությունների համաձայնության դեպքում Հանձնաժողովն ապահովում է նշված հարցի քննարկումը Հանձնաժողովի կոլեգիային կից համապատասխան խորհրդատվական մարմինների շրջանակներում և իրականացնում է միջազգային պայմանագրի կնքման տնտեսական նպատակահարմարության նախնական վերլուծություն՝ հաշվի առնելով, սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան, անդամ պետությունների դիրքորոշումների մասին ներկայացված տեղեկատվությունը:

2. Երրորդ կողմից ստացված՝ միջազգային պայմանագիր կնքելու առաջարկության հետագա քննարկման նպատակահարմարությանը մեկ կամ մի քանի անդամ պետությունների անհամաձայնության դեպքում Հանձնաժողովը երրորդ կողմին տեղեկացնում է Միության դիրքորոշման մասին՝ ուղարկելով անդամ պետությունների հետ նախապես համաձայնեցված համապատասխան պատասխան:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված միջոցառումների անցկացման արդյունքներով Հանձնաժողովի կոլեգիան, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատակարգին» համապատասխան, ապահովում է նյութերի նախապատրաստումը, որոնք ներառում են նաև միջազգային պայմանագիր կնքելու նպատակահարմարության մասին վերլուծական տեղեկանքը, Հանձնաժողովի խորհրդի կողմից քննարկման համար: Նյութերում ընդգրկվում են նաև միջազգային պայմանագրի տեքստը (առկայության դեպքում) կամ միջազգային պայմանագրի նախագիծը (Միության մարմինների աշխատանքային լեզվով թարգմանության հետ միասին) կամ դրա հայեցակարգային դրույթները՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետի երրորդ պարբերության մեջ նշված դեպքի:

4. Միջազգային պայմանագրի նախագծի հայեցակարգային դրույթները, որպես կանոն, ներառում են միջազգային պայմանագրի կնքման հիմնական նպատակներին և խնդիրներին, միջազգային պայմանագրում կարգավորման ենթակա հիմնական հարցերին առնչվող դրույթներ:

Միջազգային պայմանագրի հայեցակարգային դրույթների պատրաստումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ անդամ պետությունների հետ համատեղ, այդ թվում նաև՝ երրորդ կողմի հետ խորհրդակցությունների արդյունքների հիման վրա (դրանց անցկացման պարագայում):

1994 թվականի՝ «Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի» XXIV հոդվածի 8-րդ կետի իմաստով միջազգային պայմանագրի կնքման հարցը քննարկվելու պարագայում միջազգային պայմանագրի հայեցակարգային դրույթները պատրաստվում են միջազգային պայմանագրի կնքման նպատակահարմարության ուսումնասիրման հարցերով համատեղ հետազոտական խմբի (այսուհետ՝ համատեղ հետազոտական խումբ) շրջանակներում և ներկայացվում են Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը, ինչպես նշված է սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 6-րդ կետում:

5. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված վերլուծական տեղեկանքը պետք է պարունակի.

ա) միջազգային պայմանագրի կնքման՝ ենթադրվող տնտեսական հետևանքների մասին տեղեկություններ, ներառյալ անդամ պետությունների համար՝ այդ պայմանագրի կնքման հետ կապված հնարավոր առավելությունների և ռիսկերի մասին,

բ) միջազգային պայմանագրի կնքման հնարավոր ժամկետների մասին տեղեկատվություն,

գ) միջազգային պայմանագրի կնքման վերաբերյալ երրորդ կողմի մտադրության մասին տեղեկություններ:

6. Սույն հոդվածի 5-րդ կետի «գ» ենթակետում նշված տեղեկությունների ճշտման անհրաժեշտության դեպքում տվյալ հարցը Հանձնաժողովի կոլեգիային կից համապատասխան խորհրդատվական կոմիտեի շրջանակներում անդամ պետությունների հետ համաձայնեցնելուց հետո Հանձնաժողովը երրորդ կողմի հետ անցկացնում է նախնական խորհրդակցություններ:

#### **Հոդված 4**

1. Միջազգային պայմանագիր կնքելու հարցի քննարկման արդյունքներով Հանձնաժողովի խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

սույն Համաձայնագրի III բաժնին համապատասխան՝ համատեղ հետազոտական խումբ ստեղծելու մասին.

բանակցություններ սկսելու հարցը Բարձրագույն խորհրդի քննարկմանը ներկայացնելու և միջազգային պայմանագրի նախագծի հայեցակարգային դրույթները հավանության արժանացնելու մասին:

2. Միջազգային պայմանագրին միանալու հարցի քննարկման պարագայում Հանձնաժողովի խորհուրդը որոշում է ընդունում անդամ պետությունների կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի անցկացման մասին՝ հետագայում Բարձրագույն խորհրդի կողմից սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածում նշված որոշման ընդունման նպատակով, եթե այլ բան սահմանված չէ Հանձնաժողովի խորհրդի որոշմամբ:

Միջազգային պայմանագրին միանալու հարցի քննարկման անհրաժեշտության դեպքում սույն Համաձայնագրի III և IV բաժինները համապատասխան հարաբերությունների նկատմամբ կիրառվում են համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*):

### **Բաժին III**

#### **Համատեղ հետազոտական խումբը**

#### **Հոդված 5**

1. Միջազգային պայմանագիր կնքելու առաջարկության լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի խորհուրդը որոշում է ընդունում անդամ պետությունների և Հանձնաժողովի ներկայացուցիչներից կազմված համատեղ հետազոտական խմբի ձևավորման մասին:

2. 1994 թվականի՝ «Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի» XXIV հոդվածի 8-րդ կետի իմաստով միջազգային պայմանագիր կնքելու առաջարկությունը

քննարկելու դեպքում համատեղ հետազոտական խումբը ձևավորվում է պարտադիր կարգով:

3. Համատեղ հետազոտական խմբի աշխատանքներին մասնակցում են երրորդ կողմի ներկայացուցիչներ:

4. Համատեղ հետազոտական խմբի նիստերի և փորձագիտական խորհրդակցությունների անցկացման ժամկետները և ձևաչափը Հանձնաժողովի կողմից համաձայնեցվում են անդամ պետությունների և երրորդ կողմի հետ:

## **Հոդված 6**

1. Սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան ստեղծված համատեղ հետազոտական խումբն իր աշխատանքի շրջանակներում ուսումնասիրում է հետևյալ հարցերը.

ա) երրորդ կողմի հետ ապրանքների առևտրի կառուցվածքը.

բ) միջազգային պայմանագրում կարգավորման ենթակա հիմնական հարցերը.

գ) միջազգային պայմանագրի կնքման հնարավոր տնտեսական հետևանքները՝ ներառյալ անդամ պետություններից յուրաքանչյուրի տնտեսության բնագավառների համար առավելությունները և ռիսկերը.

դ) միջազգային պայմանագրի կնքման հետևանքների տնտեսամաթեմատիկական մոդելավորման արդյունքները (նաև հաշվի առնելով համապատասխան վերլուծության իրականացման համար համատեղ հետազոտական խմբի մեջ չմտնող փորձագետներ ներգրավելու անհրաժեշտությունը).

ե) միջազգային պայմանագրի կնքման նպատակահարմարության մասին որոշումն ընդունելու վրա ազդեցություն ունեցող այլ հարցեր:

2. Անդամ պետությունների և երրորդ կողմի շահագրգռվածության դեպքում, սույն հոդվածի 1-ին կետում նշված հարցերից բացի, կարող են ուսումնասիրվել նաև.

ա) ապրանքների առևտրի կառուցվածքը երրորդ կողմի հետ.

բ) համագործակցության հնարավոր ուղղությունները ներդրումային ոլորտում.

գ) առևտրատնտեսական համագործակցության ոլորտում հնարավոր լրացուցիչ խնդիրները, որոնք կարող են լուծվել առևտրային ռեժիմի ազատականացման պայմաններում:

3. Համատեղ հետազոտական խմբի աշխատանքի շրջանակներում պատրաստվում են միջազգային պայմանագրի նախագծի հայեցակարգային դրույթները:

4. Մինչև համատեղ հետազոտական խմբի աշխատանքի ավարտը համատեղ հետազոտական խմբի աշխատանքային լեզվով կազմված և Միության մարմինների աշխատանքային լեզվով թարգմանված ամփոփիչ զեկույցի նախագիծն ուղարկվում է անդամ պետությունների քննարկմանը: Անդամ պետությունների կողմից ամփոփիչ զեկույցի նախագծի քննարկման ժամկետը սահմանվում է փոխգործողության կարգով:

5. Համատեղ հետազոտական խմբի աշխատանքի ավարտ է համարվում ամփոփիչ զեկույցի համաձայնեցումը անդամ պետությունների և երրորդ կողմի հետ:

6. Ամփոփիչ զեկույցը (ի հավելումն սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետում նշված նյութերին) «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատակարգով» սահմանված կարգով ներկայացվում է Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը՝ միջազգային պայմանագրի կնքման առաջարկությունը Բարձրագույն խորհրդի քննարկմանը ներկայացնելու մասին որոշման ընդունման նպատակով:

## **Բաժին IV**

### **Բանակցությունները**

#### **Հոդված 7**

1. Երրորդ կողմի հետ միջազգային պայմանագրի կնքման շուրջ բանակցությունները (այսուհետ՝ բանակցություններ) անցկացվում են Բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա:

2. Բանակցություններն անցկացվում են անդամ պետությունների և Հանձնաժողովի ներկայացուցիչներից կազմված բանակցային պատվիրակության

կողմից (այսուհետ՝ բանակցային պատվիրակություն)՝ Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող հրահանգներին համապատասխան:

3. Բանակցությունների անցկացման հրահանգների նախագիծը մշակվում է Հանձնաժողովի և անդամ պետությունների կողմից համատեղ՝ միջազգային պայմանագրի նախագծի հայեցակարգային դրույթները հաշվի առնելով և բանակցություններ սկսելու մասին Բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա, և քննարկվում է Հանձնաժողովի կոլեգիային կից՝ համապատասխան խորհրդատվական մարմնի շրջանակներում:

### **Հոդված 8**

1. Հանձնաժողովի խորհուրդը նշանակում է Միության անունից բանակցությունները վարելու համար պատասխանատու՝ բանակցային պատվիրակության ղեկավարին, ինչպես նաև հաստատում է բանակցություններին մասնակցելու համար պատվիրակության կազմը կամ սահմանում է դրա ձևավորման կարգը:

2. Անդամ պետություններից յուրաքանչյուրը սահմանում է բանակցային պատվիրակության՝ համապատասխան ազգային մասի ղեկավարին:

### **Հոդված 9**

1. Բանակցային պատվիրակության ղեկավարն իրականացնում է երրորդ կողմին փոխանցվող, բանակցային պատվիրակության բանակցային դիրքորոշումը պարունակող փաստաթղթերի նախագծերի գրավոր համաձայնեցում անդամ պետությունների հետ:

Համապատասխան փաստաթղթերի նախագծերի համաձայնեցումն անդամ պետությունների կողմից կատարվում է փոխգործակցության կարգով սահմանված ժամկետում:

Հանձնաժողովը երրորդ կողմից ստացած նյութերն ուղարկում է անդամ պետություններին փոխգործակցության կարգով սահմանված ժամկետում:



2. Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ համաձայնեցումը (բանակցային դիրքորոշում ձևավորելու նպատակով) կարող է իրականացվել անդամ պետությունների միջև՝ Հանձնաժողովի հարթակում կազմակերպվող խորհրդակցությունների շրջանակում, ինչպես նաև Հանձնաժողովի կոլեգիային կից՝ համապատասխան խորհրդատվական մարմինների նիստերի շրջանակում:

Բանակցային պատվիրակության բանակցային դիրքորոշման մշակումը կատարվում է փոխգործակցության կարգին համապատասխան:

Բանակցային պատվիրակության բանակցային դիրքորոշումը նշված խորհրդակցությունների շրջանակում համաձայնեցնելու անհնարինության դեպքում համապատասխան հարցը ներկայացվում է Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը:

3. Բանակցությունների ընթացքում բանակցային պատվիրակությունը գործում է բացառապես հրահանգների և անդամ պետությունների կողմից համաձայնեցված՝ բանակցային պատվիրակության բանակցային դիրքորոշման շրջանակում:

Բանակցային պատվիրակության ղեկավարը բանակցային պատվիրակության անունից պաշտոնապես հանդես է գալիս նախաձեռնություններով և պաշտոնապես համաձայնեցնում է երրորդ կողմի՝ անդամ պետությունների կողմից նախնական կարգով հավանության արժանացած առաջարկությունները:

Բանակցային պատվիրակության ղեկավարն իրականացնում է բանակցային խմբերի աշխատանքը համակարգող փորձագետների գործունեության համակարգումը, այդ թվում՝ անդամ պետությունների հետ համաձայնեցված բանակցային պատվիրակության բանակցային դիրքորոշումը պաշտպանելու նպատակով:

4. Բանակցային պատվիրակության ղեկավարը բանակցությունների յուրաքանչյուր փուլի արդյունքներով, փոխգործակցության կարգով սահմանված ժամկետում անդամ պետություններին և Հանձնաժողովին է ուղարկում բանակցությունների ընթացքի և միջազգային պայմանագրի նախագծի շուրջ աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվություն, բանակցությունների նախորդ փուլի արդյունքների հիման վրա լրամշակված՝ միջազգային պայմանագրի նախագիծը, ինչպես նաև՝ անդամ պետությունների հարցման հիման վրա, ըստ անհրաժեշտության, այլ նյութեր:

5. Փոխգործակցության կարգով սահմանված ժամկետում անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում սույն հոդվածի 4-րդ կետում նշված նյութերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա առաջարկություններ:

6. Բանակցությունների արդյունքներով պատրաստված միջազգային պայմանագրի նախագիծը՝ երրորդ կողմի հետ համաձայնեցված լեզվով (լեզուներով) և Միության մարմինների աշխատանքային լեզվով թարգմանությամբ, Հանձնաժողովի կողմից ուղարկվում է անդամ պետություններին՝ ներպետական համաձայնեցումների նպատակով:

Անդամ պետության հարցման հիման վրա, կամ եթե անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված է, որ միջազգային պայմանագրի նախագծի ներպետական համաձայնեցումը կատարվում է անդամ պետության պետական լեզվով, կամ միջազգային պայմանագիրն ստորագրվում է բոլոր անդամ պետությունների պետական լեզուներով, միջազգային պայմանագրի նախագիծը Հանձնաժողովի կողմից ուղարկվում է ներպետական համաձայնեցման. դրան կցվում են այդ անդամ պետությունների պետական լեզուներով թարգմանությունները:

7. Միջազգային պայմանագրի նախագիծը ներպետական համաձայնեցման արդյունքներով լրամշակվում է, համաձայնեցվում է երրորդ կողմի հետ և Միության մարմինների աշխատանքային լեզվով թարգմանությամբ ուղարկվում է անդամ պետություններին՝ դրա ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անցկացնելու և, այնուհետև, Բարձրագույն խորհրդի քննարկմանը ներկայացնելու համար:

8. Միջազգային պայմանագիրը բոլոր անդամ պետությունների պետական լեզուներով ստորագրվելու դեպքում անդամ պետություններն ապահովում են սույն հոդվածի 6-րդ կետի երկրորդ պարբերության համապատասխան ներկայացված միջազգային պայմանագրի նախագծի՝ համապատասխան պետական լեզվով թարգմանության լրամշակումը և այն ուղարկում են Հանձնաժողով ոչ ուշ, քան մինչև միջազգային պայմանագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի անցկացման արդյունքների մասին տեղեկատվության ուղարկումը:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պետությունից և երրորդ կողմից միջազգային պայմանագրի նախագծի՝ համապատասխան պետական լեզվով

թարգմանություններն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան 5 օրացուցային օրվա ընթացքում, նշված թարգմանություններն ուղարկում է մյուս անդամ պետություններին:

## **Բաժին V**

### **Միջազգային պայմանագրի ստորագրումը**

#### **Հոդված 10**

1. Միության անունից միջազգային պայմանագիրն ստորագրվում է Բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա՝ անդամ պետությունների կողմից միջազգային պայմանագրի նախագծի առնչությամբ համապատասխան ներպետական ընթացակարգերն ավարտվելուց հետո:

2. Միջազգային պայմանագրերի ստորագրումն իրականացվում է անդամ պետությունների և Միության կողմից՝ բացառությամբ այն դեպքի, երբ Բարձրագույն խորհրդի կողմից որոշում է ընդունվում միջազգային պայմանագրի ստորագրման այլ ձևաչափի մասին:

3. Միջազգային պայմանագրի ստորագրման մասին որոշում ընդունելիս Բարձրագույն խորհուրդը որոշում է Միության մարմնի այն անձին, որը լիազորված է Միության անունից ստորագրելու միջազգային պայմանագիրը՝ Միության իրավասությանը վերապահված մասով:

4. Բարձրագույն խորհրդի կողմից հավանության արժանացած միջազգային պայմանագրի նախագծում Միության անունից միջազգային պայմանագիրն ստորագրելու համար լիազորված՝ Միության մարմնի անձի կողմից չեն կարող կատարվել փոփոխություններ՝ բացառությամբ տեխնիկական բնույթի փոփոխությունների:

#### **Հոդված 11**

Միության համար միջազգային պայմանագիրը պարտադիր լինելու վերաբերյալ նրա համաձայնությունն արտահայտելու մասին կամ ստորագրված միջազգային

պայմանագրի կողմ չդառնալու մտադրության մասին որոշումն ընդունվում է Բարձրագույն խորհրդի կողմից՝ բոլոր անդամ պետությունների կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտվելուց հետո:

## **Հոդված 12**

1. Եթե միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Բարձրագույն խորհրդի կողմից սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածում նշված՝ Բարձրագույն խորհրդի որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում Հանձնաժողովը երրորդ կողմին տեղեկացնում է Միության համար միջազգային պայմանագրի պարտադիր լինելու վերաբերյալ նրա համաձայնության արտահայտման մասին՝ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կամ նրան փոխարինող անձի կողմից ստորագրված ծանուցում ուղարկելու կամ համապատասխան փաստաթուղթն ի պահ հանձնելու միջոցով:

2. Միջազգային պայմանագրին Միության միանալու դեպքում այդպիսի միջազգային պայմանագրի ավանդապահին ի պահ է հանձնվում Միության համար միջազգային պայմանագրի պարտադիր լինելու վերաբերյալ նրա համաձայնության արտահայտումը վկայող փաստաթուղթը, եթե այլ բան նախատեսված չէ տվյալ միջազգային պայմանագրով: Այդպիսի փաստաթղթի ստորագրումը Միության անունից կատարում է Հանձնաժողովի խորհրդի նախագահը:

3. Հանձնաժողովը միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը երրորդ կողմի կողմից կատարվելու մասին ծանուցումը երրորդ կողմից ստանալու ամսաթվից 10 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում այդ մասին տեղեկացնում է անդամ պետություններին:

Հանձնաժողովն անդամ պետություններին տեղեկացնում է նաև միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:

## **Հոդված 13**

1. Միջազգային պայմանագրի ստորագրման և (կամ) Միության համար միջազգային պայմանագրի պարտադիր լինելու վերաբերյալ նրա համաձայնության արտահայտման ժամանակ Միությունը կարող է վերապահումներ անել, եթե այլ բան նախատեսված չէ տվյալ միջազգային պայմանագրի դրույթներով կամ միջազգային իրավունքի՝ այլ կիրառելի նորմերով:

2. Միության անունից վերապահման մասին որոշումը Բարձրագույն խորհրդի կողմից ընդունվում է միջազգային պայմանագիրն ստորագրելու և (կամ) Միության համար միջազգային պայմանագրի պարտադիր լինելու վերաբերյալ նրա համաձայնության արտահայտման մասին որոշումն ընդունելու հետ միաժամանակ:

3. Եթե միջազգային պայմանագրով այլ բան սահմանված չէ, Միության անունից վերապահումները կարող են հանվել ցանկացած ժամանակ: Միության անունից վերապահումները հանվում են Բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա:

4. Միջազգային պայմանագրի վերաբերյալ երրորդ կողմի արած վերապահման ընդունումը կամ դրա դեմ առարկությունը կատարվում է Բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա՝ տվյալ միջազգային պայմանագրի դրույթներին և միջազգային իրավունքի՝ այլ կիրառելի նորմերին համապատասխան:

#### **Հոդված 14**

1. Միջազգային պայմանագրերը, որոնց՝ Միության համար պարտադիր լինելու վերաբերյալ Միության կողմից համաձայնություն է արտահայտվել, միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու, դրա դադարեցման, միջազգային պայմանագրից միության դուրս գալու կամ դրա գործողության կասեցման մասին տեղեկությունները ենթակա են հրապարակման Միության պաշտոնական կայքում:

2. Անդամ պետություններում միջազգային պայմանագրերը հրապարակվում են անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված կարգով:

3. Միության պաշտոնական կայքում միջազգային պայմանագրի հրապարակման ամսաթիվը համարվում է Միության շրջանակներում դրա պաշտոնական հրապարակման ամսաթիվ:

## Հոդված 15

1. Միջազգային պայմանագրի դրույթների մեկնաբանման վերաբերյալ Միության դիրքորոշումը ձևավորվում է բոլոր անդամ պետությունների կողմից համատեղ՝ Հանձնաժողովի աջակցությամբ:

2. Միջազգային պայմանագրի մեկնաբանման վերաբերյալ Միության դիրքորոշման ձևավորման ժամանակ անդամ պետությունների միջև տարաձայնությունների դեպքում դրանք լուծվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

## Հոդված 16

1. Միջազգային պայմանագրի դադարեցումը, միջազգային պայմանագրից Միության դուրս գալը կամ դրա գործողության կասեցումը կատարվում են տվյալ միջազգային պայմանագրի դրույթներին և միջազգային իրավունքի՝ կիրառելի այլ նորմերին համապատասխան:

2. Միության համար միջազգային պայմանագրի պարտադիր լինելու վերաբերյալ համաձայնությունը հետ վերցնելու, միջազգային պայմանագրի դադարեցման, միջազգային պայմանագրից Միության դուրս գալու կամ դրա գործողության կասեցման մասին առաջարկությունը Հանձնաժողով է ներկայացվում Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի անունով՝ անդամ պետության կամ Հանձնաժողովի Խորհրդի անդամի կողմից:

3. Միության համար միջազգային պայմանագրի պարտադիր լինելու վերաբերյալ համաձայնությունը հետ վերցնելու, միջազգային պայմանագրի դադարեցման, միջազգային պայմանագրից Միության դուրս գալու կամ դրա գործողության կասեցման մասին առաջարկություն ստանալու մասին տեղեկատվությունը Հանձնաժողովի կողմից ուղարկվում է անդամ պետություններին:

4. Միության համար միջազգային պայմանագրի պարտադիր լինելու վերաբերյալ համաձայնությունը հետ վերցնելու, միջազգային պայմանագրի դադարեցման,

միջազգային պայմանագրից Միության դուրս գալու կամ դրա գործողության կասեցման մասին առաջարկությունը քննարկելուց հետո անդամ պետությունները փոխգործակցության կարգով սահմանված ժամկետում Հանձնաժողովին տեղեկացնում են իրենց դիրքորոշումների մասին:

5. Միության համար միջազգային պայմանագրի պարտադիր լինելու վերաբերյալ համաձայնությունը հետ վերցնելու, միջազգային պայմանագրի դադարեցման, միջազգային պայմանագրից Միության դուրս գալու կամ դրա գործողության կասեցման մասին առաջարկությանը բոլոր անդամ պետությունների կողմ լինելու դեպքում այդ առաջարկությունը «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատակարգով» սահմանված կարգով ներկայացվում է Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը (Հանձնաժողովի խորհրդի կողմից քննարկվող նյութերին կցվում են Միության համար միջազգային պայմանագրի պարտադիր լինելու վերաբերյալ համաձայնությունը հետ վերցնելու, միջազգային պայմանագրի դադարեցման, միջազգային պայմանագրից Միության դուրս գալու կամ դրա գործողության կասեցման հիմքերի, կարգի, հնարավորության և հետևանքների մասին վերլուծական տեղեկանք, միջազգային պայմանագրի պատճենը և այլ նյութեր):

Նախքան միջազգային պայմանագրի դադարեցման, միջազգային պայմանագրից Միության դուրս գալու կամ դրա գործողության կասեցման մասին առաջարկությունը Հանձնաժողովի խորհրդի կողմից քննարկվելը՝ Հանձնաժողովի կոլեգիան անդամ պետությունների հետ համատեղ իրավասու է, անհրաժեշտության դեպքում, երրորդ կողմի հետ քննարկել միջազգային պայմանագրի դադարեցման, միջազգային պայմանագրից Միության դուրս գալու կամ դրա գործողության կասեցման հետ կապված կարգը, ընթացակարգերը, հետևանքները և այլ հարցեր:

6. Միության համար միջազգային պայմանագրի պարտադիր լինելու վերաբերյալ համաձայնությունը հետ վերցնելու, միջազգային պայմանագրի դադարեցման, միջազգային պայմանագրից Միության դուրս գալու կամ դրա գործողության կասեցման հարցի քննարկումը Բարձրագույն խորհրդի կողմից կատարվում է անդամ պետությունների՝ անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի անցկացումից հետո:

7. Միության համար միջազգային պայմանագրի պարտադիր լինելու վերաբերյալ համաձայնությունը հետ վերցնելու, միջազգային պայմանագրի դադարեցման, միջազգային պայմանագրից Միության դուրս գալու կամ դրա գործողության կասեցման, ինչպես նաև կասեցված միջազգային պայմանագրի գործողության վերսկսման մասին որոշումը Բարձրագույն խորհրդի կողմից ընդունվում է բոլոր անդամ պետությունների կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարումից հետո:

Բարձրագույն խորհրդի կողմից ընդունված որոշման մասին ծանուցումը երրորդ կողմին ուղարկվում է սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածով նախատեսված կարգով:

### **Հոդված 17**

Երրորդ կողմի կողմից միջազգային պայմանագրով հանձն առնված պարտավորությունները խախտելու դեպքում Հանձնաժողովի կոլեգիայի կամ անդամ պետությունների կողմից Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը կարող են ներկայացվել միջոցներ ձեռնարկելու մասին առաջարկություններ՝ միջազգային պայմանագրի դրույթներին և միջազգային իրավունքին համապատասխան:

### **Հոդված 18**

Միջազգային պայմանագրի բնօրինակը միջազգային պայմանագրի ստորագրման օրվանից 10 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում ի պահ է հանձնվում Հանձնաժողովին:

Միջազգային պայմանագրի հաստատված պատճենները Հանձնաժողովի կողմից ուղարկվում են անդամ պետություններին միջազգային պայմանագրի ստորագրման կամ միջազգային պայմանագրի ավանդապահից կողմից հաստատված պատճենների ստացման (միջազգային պայմանագրին միանալու դեպքում) օրվանից 10 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում:

Միջազգային պայմանագրի՝ Միության մարմինների աշխատանքային լեզվով թարգմանությունը (այն դեպքում, երբ այն միջազգային պայմանագրի լեզուն չէ)



կատարվում է Հանձնաժողովի կողմից, համաձայնեցվում է անդամ պետությունների հետ և ուղարկվում է անդամ պետություններին միջազգային պայմանագրի հաստատված պատճենի ուղարկման հետ միաժամանակ:

Սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ միջազգային պայմանագրի տեքստի թարգմանությունը Միության աշխատանքային լեզվով, սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված միջազգային պայմանագրի նախագծի թարգմանությունը, սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված՝ միջազգային պայմանագրի նախագծի թարգմանությունը անդամ պետությունների պետական լեզուներով, ինչպես նաև սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված համատեղ հետազոտական խմբի ամփոփիչ զեկույցի թարգմանությունը Միության մարմինների աշխատանքային լեզվով կատարվում է Հանձնաժողովի կողմից՝ Հանձնաժողովի խորհրդի կողմից սահմանված կարգով:

## **Հոդված 19**

Հանձնաժողովը կատարում է բազմակողմ միջազգային պայմանագրերի ավանդապահի գործառույթները, եթե, այդ միջազգային պայմանագրերին համապատասխան, այդ գործառույթները վերապահված են Միությանը:

## **Բաժին VI**

### **Եզրափակիչ դրույթներ**

## **Հոդված 20**

Սույն Համաձայնագրի կիրառման հետ կապված վեճերը լուծվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

## **Հոդված 21**

Սույն Համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է և կազմում է Միության իրավունքի մաս:

## **Հոդված 22**

Սույն Համաձայնագրի վերաբերյալ վերապահումներ չեն թույլատրվում:

## **Հոդված 23**

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով, կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 24-րդ հոդվածով նախատեսված կարգով:

## **Հոդված 24**

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում անդամ պետությունների կողմից այն վավերացվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալու օրվանից:

Կատարված է Սոչի քաղաքում, 2018 թվականի մայիսի 14-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

<b>Հայաստանի Հանրապետության կողմից՝</b>	<b>Բելառուսի Հանրապետության կողմից՝</b>	<b>Ղազախստանի Հանրապետության կողմից՝</b>	<b>Ղրղզստանի Հանրապետության կողմից՝</b>	<b>Ռուսաստանի Դաշնության կողմից՝</b>
---	---	--	---	--

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018 թվականի մայիսի 14-ին Սոչիում ստորագրված «Երրորդ պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ միջազգային ինտեգրացիոն միավորումների հետ Եվրասիական տնտեսական միության միջազգային պայմանագրերի մասին» մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն